

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-125-05.09.2017-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1173-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-125-05.09.2017-ՏՀ-011/0)
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բովանդակային առումով առաջարկվող շեմերի չափերը վերանայման կարիք ունեն, մասնավորապես՝

1) նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով առաջարկվող օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի երրորդ պարբերության համաձայն տնտեսվարող սուբյեկտը (սուբյեկտները) չի (չեն) կարող ճանաչվել գերիշխող դիրք ունեցող, եթե նա, որ որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով չի (չեն) գերազանցում տվյալ շուկայի մեկ քսաներորդը: Նախագծի հիմնավորման մեջ անդրադարձ է կատարվում այն հանգամանքին, որ առևտրային ցանցի դեպքում հնարավոր է լինեն դեպքեր, երբ շուկայում 1 տոկոս մասնաբաժին ունեցող տնտեսվարողը նույնպես համարվի գերիշխող դիրք ունեցող՝ 49 տոկոս մասնաբաժին ունեցող տնտեսվարողի հետ միաժամանակ, իսկ 0.99 տոկոս մասնաբաժին ունեցողը՝ ոչ: Համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) որոշմամբ: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված պայմանների առկայությունը բավարար չէ մեխանիզմներն տնտեսվարող սուբյեկտին գերիշխող դիրք ունեցող սուբյեկտի կարգավիճակ տալու համար, այլ յուրաքանչյուր դեպքում հաշվի են առնվում տվյալ ապրանքային շուկայի կառուցվածքի առանձնահատկություններն այդ շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների բաժինների բաշխվածության վերաբերյալ: Հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատճառաբանված և հիմնավորված: Տեղին է նշել, որ Հայաս-

տանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են անհրաժեշտ գործիքակազմեր հանձնաժողովի որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում դրանք բողոքարկելու վերաբերյալ: Օրենքը հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտին նաև ներկայացնելու իր գերիշխող դիրքի առկայությունը բացառող ապացույցներ: Այս համատեքստում, համաձայն հանձնաժողովի կողմից ներկայացված տեղեկատվության, գործնականում դեռևս հիմնավորման մեջ նշված դեպքեր չեն արձանագրվել:

Հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ապրանքային շուկայում, որպես իրացնող կամ ձեռք բերող, 10 տոկոսից պակաս մասնաբաժին ունեցող տնտեսվարող սուբյեկտները չունեն որևէ ազդեցություն մրցակցային միջավայրի վրա, հետևաբար և գերիշխող դիրք ունենալ չեն կարող: Հաշվի առնելով նշվածը և ապրանքային շուկայի վրա ազդեցություն չունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության անհարկի սահմանափակման հնարավորությունը բացառելու անհրաժեշտությունը, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությամբ առաջարկվող «մեկ քսաներորդը» բառերը փոխարինել «մեկ տասներորդը» բառերով.

2) նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով առաջարկվող փոփոխության համաձայն առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ, որի առևտրային գործունեության մասով իրացման տարեկան շրջանառությունը գերազանցում է 500 մլն դրամի շեմը: Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տեղեկատվության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի շրջանառությունը 2016 թվականին կազմել է 963.2 մլրդ դրամ, որի 33.0 տոկոսը (317.7 մլրդ դրամ) բաժին է ընկել գերփոքր (մինչև 9 աշխատող ունեցող) խանութներին, 21.6 տոկոսը (207.9 մլրդ դրամ)՝ փոքր (10-49 աշխատող ունեցող), իսկ 45.4 տոկոսը (437.6 մլրդ դրամ)՝ միջին (50-249 աշխատող ունե-

ցող) խանութներին: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը՝ մեկ փոքր (10-49 աշխատող) խանութի (առևտրային օբյեկտ) տարեկան շրջանառությունը միջինում կազմում է շուրջ 370 մլն դրամ:

Այս ամենի հաշվառմամբ, առաջարկում ենք նախագծով սահմանել, որ առևտրային ցանցը, որը հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ, կարող է համարվել գերիշխող դիրք ունեցող, եթե վերջինիս առևտրային գործունեության մասով իրացման տարեկան շրջանառությունը գերազանցում է 1.5 մլրդ դրամի շեմը:

Ուստի առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի «500 մլն» բառերը փոխարինել «1.5 մլրդ» բառերով:

2. Օրենսդրական տեխնիկայի պահանջները նկատի ունենալով՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի՝

1) 1-ին մասում «3-րդ կետը» բառերը փոխարինել «3-րդ մասը» բառերով.

2) 1-ին մասի երրորդ պարբերության մեջ «ճանաչվել» բառը փոխարինել «համարել» բառով.

3) 2-րդ մասում «5-րդ կետը» բառերը փոխարինել «5-րդ մասը» բառերով.

4) երրորդ պարբերությունը շարադրել առաջին պարբերությունից հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի ընդունման դեպքում օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում լրացումներ և փոփոխություններ կկատարվեն հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի «Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի, այդ թվում՝ շուկայական իշխանության որոշման կարգը և չափանիշները սահմանելու մասին» N 194-Ն որոշման մեջ:

Պ-125-05.09.2017-ՏՀ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112-Ն օրենքի 6-րդ հոդվածի՝

1. 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերից որեւէ մեկով տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը գերիշխող դիրք ունեցող է(են) համարվում՝ հաշվի առնելով տվյալ ապրանքային շուկայի կառուցվածքի առանձնահատկություններն այդ շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների բաժինների բաշխվածության վերաբերյալ:

Սույն հոդվածում նշված տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը կարող է(են) ներկայացնել տվյալ ապրանքային շուկայում իր(ենց) գերիշխող դիրքի առկայությունը բացառող ապացույցներ:

Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերից որեւէ մեկով տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը չի(չեն) կարող ճանաչվել գերիշխող դիրք ունեցող, եթե նա, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով չի(չեն) գերազանցում տվյալ շուկայի մեկ քսաներորդը:

2. 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

Առետրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առետրային օբյեկտների համախումբ, որի առետրային գործունեության մասով իրացման տարեկան շրջանառությունը գերազանցում է 500 մլն. դրամի շեմը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներ միասին կարող են ճանաչվել գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք միասին զբաղեցնում են շուկայի մեկ երկրորդը, իսկ երեք ընկերությունները միասին՝ շուկայի երկու երրորդը:

Օրենքի փոփոխության անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ վերջինիս ներկա ձևակերպումը թույլ է տալիս պնդել, որ եթե շուկայում առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտն ունի 49 տոկոս մասնաբաժին, երկրորդը՝ 1 տոկոս, իսկ երրորդ եւ մնացած ընկերությունները 0.99 տոկոս, ապա առաջին երկու ընկերությունները կարող են համարվել գերիշխող դիրք ունեցող, իսկ երրորդն ու մնացածները՝ ոչ: Այնինչ ակնհայտ է, որ նախ՝ 1 տոկոս շուկայական մասնաբաժին ունեցող ընկերությունը չի կարող համեմատվել 49 տոկոս մասնաբաժին ունեցողի հետ եւ դիտվել որպես գերիշխող դիրք ունեցող եւ երկրորդ՝ այդ ընկերությունն իր չափերով համադրելի է մնացած փոքրերի հետ եւ ճանաչվելով գերիշխող դիրք ունեցող՝ կհայտնվի անբարենպաստ պայմաններում, կորցնելով առետրային ճկունությունն ու որպես հետեւանք՝ իրացման շուկաները: Նույնը վերաբերում է նաեւ երեք տնտեսվարողներին միասին գերիշխող դիրք ունենալու պայմաններին:

Ուսումնասիրելով միջազգային փորձը, կարող ենք փաստել, որ վերը նշված խնդիրներն իրենց լուծումներն են գտել տարբեր երկրների հակամենաշնորհային օրենսդրություններում: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է սահմանափակում մտցնել շուկայում առաջատար երկու կամ երեք ընկերություններին միասին գերիշխող դիրք ունեցող ճանաչելու սահմանումներում՝ շուկայում իրացման ծավալներով երկրորդ եւ երրորդ տնտեսվարողների համար: Ռուսաստանի Դաշնության հակամենաշնորհային օրենսդրությամբ մի քանի տնտեսվարողներին միասին գերիշխող դիրք ունեցող ճանաչելու համար հիմք է ընդունվում նրանց շուկայական մասնաբաժինը, երկարատեւ ժամանակահատվածում շուկայական մասնաբաժինների անփոփոխ լինելը, շուկա մուտք գործելու արգելքները, ապրանքների անփոխարինելի լինելը: Ընդ որում, երեք տնտեսվարող միասին կհամարվեն գերիշխող, եթե նրանց գումարային շուկայական մասնաբաժինն ավել է 50 տոկոսից, իսկ հինգ տնտեսվարողի դեպքում՝ 75 տոկոսից, եթե միայն նրանցից յուրաքանչյուրի շուկայական մասնաբաժինը 8 տոկոսից պակաս չէ: Ըստ այդմ, հաշվի առնելով ՀՀ տարբեր ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինների բաշխվածությունը, ՀՀ հակամենաշնորհային օրենքում փոփոխությունը պետք է ուղղված լինի նրան, որ երկու տնտեսվարող սուբյեկտի հնարավոր լինի համարել գերիշխող, եթե նրանց շուկայական մասնաբաժինը կգերազանցի շուկայի ընդհանուր ծավալի մեկ երկրորդը, իսկ երեքի դեպքում՝ երկու երրորդը, եթե միայն նրանցից յուրաքանչյուր շուկայական մասնաբաժինը շուկայի մեկ քսաներորդից ավելի է: Այս փոփոխությունը կբացառի արդեն հիշատակված շուկայական կառուցվածքի դեպքում փոքր շուկայական մասնաբաժին ունեցող տնտեսվարողին գերիշխող դիրք ունեցող ճանաչելու հիմքերը:

ՀՀ հակամենաշնորհային օրենսդրությամբ սահմանվում են նաեւ առետրային ցանցի՝ գերիշխող դիրք ունենալու սահմանը. այն է՝ չորս կամ ավել առետրային օբյեկտների համախումբ:

Ակնհայտ է, որ ոչ միշտ է, որ առետրի ոլորտում չորս առետրային կետերի համախումբը վկայում է գերիշխող դիրքի առկայության մասին: Չորս առետրային կետերի համախումբ կարող է լինել ինչպես խոշոր սուպերմարկետների ցանցը, այնպես էլ մանր կրպակների համախումբը: Ըստ այդմ՝ առետրային ցանցին գերիշխող ճանաչելու համար անհրաժեշտ է սահմանել իրացման շրջանառության նվազագույն շեմ, որը լավագույնս կբնութագրի ցանցի՝ շուկայական իշխանության առկայությունը եւ կբացառի փոքր կրպակների համախումբին գերիշխող դիրք ունենալու ճանաչելու հիմքերը: Առետրի տարբեր ոլորտներում իրականացված ոսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ շեմը իրացման տարեկան շրջանառության 500 մլն դրամն է: